

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկակի վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկակի վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	3 ֆր.
սարեկակի վեցամսեայ	1.50 "

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է, երեքին անգի սնկալեկերու համար 20 0/0 զեղջ կըլլայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ է

ՉԱՐՈՒԿԱՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲՈՎՈՒՄ ԵՒ ԶՈՐԵՔԵՍԱԲԻ ԵՒ ՇՍԲԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Դասակի եւ զրամ զրկէ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ տուիք

ՇՍԲԱԹ ԵՒ ԶՈՐԵՔԵՍԱԲԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՏՔ ԵՒ ԿԱՆԻԿ ՎՃԱՐԷ

ՎԵՐՋԱՊԵՍ

—)o(—

Գ.

Նախորդ երկու յօդուածներում մենք փաստեցինք թէ, Բիւրօն իրաւունք չունէր իր հաշակաւոր Ազգի մէջ գործածելու ո՛չ իւրացնել խօսքը Բալկանեան Կ. Կովտէի դրամի համար և ոչ յանձնարարութիւն խօսքը կողմանեան դրամի համար: Իրողութիւնը այն է որ առաջին դէպքում ես ներկայանում եմ աւելի իբր ըմբօստ, չենթարկվող Դաշնակցութեան որոշ մարմինները, երկրորդ դէպքում իբր եւ զո՛հ մի ուրիշ մարմնի գիտակցաբար թէ անգիտակցաբար գործած սխալին:

Ի՞նչ պէտք ունէր ուրեմն Բիւրօն այդ վարկաբեկող խօսքերը դիտմամբ գործածելու... զա փըշացած սխտէմի արդիւնքն է. ժողովրդի, Դաշնակցութեան ըստորին խաւերի միամտութիւնը պէտք է շահագործել ինչպատ անվտանգի մարմինները և ի վնաս վարդօյի Յեղափոխութեան դրամը իւրացնող է Վարդօն, հաշակեմք, մտածել է Բիւրօն և ամէն ինչ կը վերջանայ, ամբողջ կը գրգռվի և նրա մեղադրանքները բոլորը ջուրը կընկնեն:

Բայց որչափ սխալ հաշիւ և անմաքուր հաշիւ: Արեւմտեան Բիւրօն իր ստալոգ ազգով ստիպեց ինձ ապացուցել որ Բիւրօնի անգամները ընդունակ են սուտով վարկաբեկելու ջանալ կազմակերպութեան մի կարեւոր անդամին. որը կուսակցութեան շահերի պաշտպանութեան համար քննադատական դիրք է բռնել դէպի կազմակերպութիւնը: Խնդրեմ ասացեք էլ ինչո՞վ է տարբերվում այդ Բիւրօն զանազան Բարձրագոյնից, Վահաններից, Մրտոներից, Սպարոներից կազմված կենտրոնական և պարզ կոմիտէներից: Ոչինչով. հոգեբանութիւնը, ձգգ.

տուճները միեւնոյն են. այժմ զգեստներն էլ միեւնոյն են. առաջին տարբերութիւնը միայն նրանում է որ վերջինները կառավարում են բալթանների յեղափոխական գործերը... իսկ առաջինները աշխարհում ներկայացնում են ամբողջ դաշնակցութիւնը. երկրորդ տարբերութիւն այն է որ Բիւրօնները ստում են պիտակցաբար. Մրտոներին, Ապրօններին, Վահաններին և այլ անգիտակցիցներին, ապուշներին և սրկանների գոհացում տալու համար: Սա այնպիսի մի անկում է, որ ես երազել անգամ չէի հարող, հակառակ իմ բոլոր յոռետեսութեան:

Ոչ, պարօններ, ես դրամ իւրացնող չեմ, և ոչ էլ յանձնարարված դրամը իւր տեղը չը յանձնող. ԵՍ ԸՄԲՈՒՍ ԵՄ, մեր կուսակցութեան մէջ տիրող կարգերի, սխտէմի դէմ: Սխտէմ և կարգեր որոնք դէպի կորուստ են աանում թէ կուսակցութիւնը և թէ խելձ միամիտ դիւրաւ հաւատացող հայ ժողովրդին:

Այո, ինչպէս ըմբօստ եմ մեզ տանջող կառավարութեանց դէմ, այնպէս և ըմբօստ եմ ձեր դէմ: Իմ բաց նամակներին դուք կարեւորութիւն չուղեցիք տալ. բայց իմ գուշակութիւնները կատարվեցին կէտ առ կէտ: Այսօր Խիւրքիոյ բանաբը լիքն են հայերով, կազմակերպութեան բարոյական և նիւթական հարստութիւնը ջնջվեց արմատից, ու թուրք տակից քանդում է ամեն մի բան որ կարող էր լինել շեցուկ յեղափոխութեան:

Բաց նամակները գրածս միջոցին եթէ հնարաւորութիւն ունենայի ես կը գրաւէի կազմակերպութեան բոլոր դրամները... որպէս զի հայ յեղափոխութիւնը և ժողովուրդը ազատ մնար այդ աւելորդ, անտեղի փորձանքներից և Դաշնակցութիւնը անփոխարինելի վիտաններից:

Հակայական վիտաններ, ձախուղվածներ, որոնց մասին դուք ոչինչ չէք գրում ձեր ձեռքը ընկած

օրկանում ձեր սնանկութիւնը թագցնելու համար: Դուք բաւականանում էք յոյց տալ միայն որ մեծ պատրաստութիւններ են եղել, ուրիշ ոչինչ և սգալ շարունակ. սգալ ոչ վիժած գործերի վրա, այլ մէկ մեռելի, որից շատ ու շատ բարձրները կան մահացած դաշնակցականների շարքերում...:

Ու սգում էք Հռոմի կանանց պէս. ով մեռելատիրոջից շատ վարձ է ստացել, նա աշխատում է իր ծոցում պահած սրակի մէջ աւելի արցունքի շատ կաթիլներ լցնել...:

Ամօթ է. խելքի եկէք. Մուշ, Սասուն, Վասպուրական սովի, սրի, վարակիչ հիւանդութիւնների դաշտ է. Պօլիս, Իզմիր, Աթէնք հայր որսի նիւթ է. հեծում են բանտերում ամենքը... կառավարութիւնների ձեռքն են անցնում հայ ժողովրդի նիւթական զոհողութեան արդիւնք եղող զէնքերը. Ամբրիկա, Բուլղարիա, Եգիպտոս ներկայացնում է մի քան. ժողովուրդը այլեւս չէ հաւատում մեր մարմիններին, որոնց գլուխ են կանգնած կամ գռեհիկ տարրի ներկայացուցիչներ կամ ստախոս ճռոճմարանները. և այս ամէնի պատճառը դուք էք ով վարիչներ: Ու ես մատնանշում եմ ձեզ, ըմբօստ, հազիւ ազատված իմ երկարատեւ և ակամայ համլէտական հոգեկան դրութիւնից...:

Մատնանշում եմ մաքառելու անդրդվելի որոշումով, չը նայած ձեր բոլոր գործ դրած և գործ զննելիք որոշումներին ու քայլերին իմ դէմ:

«Յեղափոխականների մէջ ամբողջ միշտ առաջ է անցնում շարժման նախակարապետներից. դրա համար որչափ կարելի է լայնօրէն տարածենք մեր համոզումները, որչափ կարելի է լաւ պարզենք, նոյն իսկ կրկնութիւններ անենք, եթէ պէտք է. և աչքերնիս չը գոցենք ճշմարտութեան առջեւ. Ու այդ տեսակ պրօպագանդան ոչ միայն մարդկանց չի հեռացնի մեր գործից, այլ կը գրաւէ բոլոր նրանց. որոնք ծարաւի են ազատութեան և ճշմարտութեան»:

«Մենք չենք փնտռում հաւատացող մարդկանց, այլ համոզված. ասում է Յեղափոխական գրագէտ Ժան Գրաւ:

Այո, մենք աչքերս չը պէտք է գոցենք ճշմարտութեան առջեւ, պէտք է աշխատենք հաւատացեալ դաշնակցական ընկերներին համոզվածների վերածել. որովհետեւ եթէ ճշմարտութիւնները թագնվեն. մարդիկ միշտ պէտք է մուծի մէջ մնան, և միայն կուրօրէն հաւատան ամեն ասածի. մինչդեռ ճշմարտութիւնները իրենց մերկութեամբ տեսնելուց յետոյ է որ համոզումը կը գոյացվի:

ՎԱՐԴՕ (Շարունակելի)

ԳՂՈՒԽ ԻԹ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳՂԻՍ.

ԱՆԳՂԻՍՅ ՊԱՏԱԿԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ (Շար. Ասխուր քիւիկ)

Պահպանողականը նշանաւոր հանդիսացած են մինչեւ այս վերջին դէպքերը թիւրքը պաշտպանելով, բայց նշաններ կան որ այլ եւս զըզուած են թուրքէն եւ յարմար պարագայի մը կըսպասեն անոր մահացու հարուած մը տալու. Լօրտ Սօլըզլըրի որ մինչեւ 1895 թիւրքիոյ պաշտպան էր, վերջին դէպքերու ժամանակ հայոց նպաստաւոր քանուկով պահպանողական քաղաքականութեան մէջ փոփոխութիւն մը մտայնց թուրքիոյ նկատմամբ: Ուստի հաւանականութիւն կայ որ եթէ որ մը Անգղիա բան մը ընէ՝ աւելի պահպանողական կուսակցութեան կը յուսացուի այդ քան թէ ազատականներէն:

Ամեն անգամ որ հայկական շարքերուն վրայ կը խօսինք, ու Եւրոպիոյ մանաւանդ Անգղիոյ՝ միջամտութեան անյաջող ելլելը ցաւով կը յիշենք, քաջալերական կէտ մը կայ որ մեր ուշադրութեան կը վրիպի եւ է այս:

Սուլթան Համիտի տուած հարածը միայն մեզի չէր, այլ մեզի հետ եւ նոյնչափ սաստիկ հարուած մըն ալ տուած է Անգղիոյ: Որչափ որ ալ Անգղիա յարաբերութիւնը խզած չէ Սուլթանին Հետ եւ ամեն ինչ առաջի պէս կընթանայ, բայց Անգղիան չի կրնար մոռնալ թիւրքին ըրածը:

նա իր պաղարիւն բնութեամբը շատ անհամբերութիւն չի ցուցներ այդ մասին. բայց Անգղիան որ մը իր ակունքն պիտի ցուցնէ անոր եւ իր վրէժը լուծէ: Ժամանակը Անգղիոյ շատ մը կնճոտ խնդիրները լուծած է. Ասիկայ ալ պիտի լուծէ. եւ Հայը այս անգամ քաղաքակիրթ ազգի մը կողմը պիտի գտնուի եւ անոր արդիւնքը վայելէ: Իրօք մեծ բարեազդեութիւն մըն է որ այսօր մեր բաղադր թէ շատ անգղիային կապուած է: Հայկական հարցին մէջ մեծ քայլ մըն է ասիկայ: Հայը Անգղիոյ պաշտպանեալը կը ճանչցուի այսօր:

Առային անգամն էր ասիկայ որ եւրոպական պետութիւն մը պաշտօնապէս, հրապարակաւ հայոց կողմ կը բռնէ, անոր դատը պաշտպանէ եւ այնչափ յառաջ երթայ մինչեւ իր բնական պաշտպանած թիւրքին հետ աւրուի: Ասանկ բան եղած չէր: Մեր բոլոր դժբախտութեանց մէջ միակ յուսադրական բանը այն է որ Անգղիան զարմանալի յարատեւութիւն մը մինչեւ իսկ յամառութիւն ցցուցած է իր քաղաքակրթութեան մէջ, եւ իր մտադրածը ուշ թէ կանուխ տեղը տարած է միշտ: Մեծ հաւանականութիւն կայ թէ այս Հայկական խնդրոյ մասին ալ այսպէս պիտի ըլլայ: Անգղիոյ անիւր կամաց քայլ ցայտակարգ կը դառնայ:

Կարծելու չէ թէ որովհետեւ Անգղիան այս անգամ բան մը չըրաւ կամ չի կրցաւ ընել, շատ ալ փափաք չունէր կամ արտայայտուած համակրութիւնը լոկ երեսանց էր եւ ամեն ինչ մոռցուած է: Հայոց համար զգացած համակրութիւններն եւ թիւրքին դէմ ունեցած ատելութիւններն կարծուած էն շատ խոր է եւ յարմար առիթ մը գալուէն անպատճառ պիտի արտայայտուի: Մոռնալու չէ որ Անգղիան պահպանողական ազգ մըն է, ոչ զիրազգրգիւն է եւ ոչ ալ զէւրաւ կը մոռնայ. բայց նաեւ գործնական ազգ է. մինչեւ որ վստահ չըլլայ թէ պիտի յաջողի չի զարնիր: Կերեւի թէ 1895ին վստահ չէր թէ տալիք հարուածը պիտի յաջողի անոր համար չի

համարձակեցաւ: Անգղիոյ պետական եւ պաշտօնական մարտոց ըրած երբեմն յայտարարութիւններէն ալ գայթակղելու չէ, երբ կրան թէ հայերը պաշտպանելու պարտական չեն եւն. եւն. Աստուք հաշուած, նպատակի մը ուղղուած խօսքեր են. որ ներքին համոզում չեն յայտնէր. գոնէ հանրային կարծիքին, զգացումին չեն համապատասխանէր. ասոնք այրած սրտի միւթարանք են:

Կարծելու չէ նաեւ թէ Անգղիան լոկ քրիստոնէական կամ մարդասիրական նպատակաւ հայերը պիտի պաշտպանէ: Այդպիսի անշահախնդրութիւն ոչ մէկ ազգ կընէ կամ ըրած է. եւ մենք իրաւունք չունինք զայն Անգղիայէ սպասելու կամ պահանջելու: Մեր բոլոր ջանքը պիտի ըլլայ ցուցնել Անգղիացոց թէ իրենց շահը մեր ալ օգուտն է: Անգղիոյ նպատակը Ռուսիան Հայաստանի լեռնադաշտէն անդին պահել է. Պարսից ծոցն ու Հնդկաստանի ճամբան անոր առջեւ գոցելու համար այդ էր իր կիրպրոսի գաշինքին նպատակը. արդ ասիկայ միայն բարեկարգ Հայաստան մը ստեղծելով հընար է: Անգղիոյ պետական մարդիկ մինչեւ հիմա կը խորհէին Հայաստանը թիւրքին միջոցաւ բարեկարգել, ասիկայ հնարաւոր կը կարծէին եւ անոր համար օգնեցին թիւրքին: Այսչափ տարուան փորձառութիւնը եւ հայկական սարսափներու ժամանակ Սուլթանին բռնած ընթացքը համոզեց Անգղիոյ պետական մարդիկը. ներքէն որ խաբուած են, թէ թիւրքիայէն բարի բան մը սպասելու չէ: Կորտ Սոլդըրը ատոր կատարեալ համոզումով գործէն յաշուեցաւ: Հայկական խնդիրը այս կարեւոր դասը անմոռանալի կերպով տուաւ Անգղիոյ: Կրնանք ապահով ըլլալ որ թիւրքիոյ խնդիրը զբաղ կը պահէ Անգղիոյ դիւրանազիտութիւնը եւ միշտ յարմար առիթի մը կը սպասուի իր ամօթալի պարտութեան վրէժը լուծելու, ոչ թէ այնչափ մեր սիրոյն ալ իր իսկ շահերուն սիրոյն: Վստահաբար Անգղիան ունի միջոց

ներ գործելու եւ Սուլթանին խելքը զլուր բերելու, երբ քաղաքական բարդութիւններու մէջ յարմար առիթ մը գտնէ: Յիրաւի իր նաեւրը Արաբատ լեռ չեն կրնար ելլել, բայց Արաբատին բռնակալը Մասեաց գագաթ չի բնակիր. նա Պոլիս, ծովեզերեայ տեղ մը կը նստի. Անգղիոյ դիւրամատչելի:

Անգղիոյ պատիւը վտանգուած է Հայոց խնդրոյն մէջ. նա անպատճառ իր պատիւը տեղը բերել պիտի փորձէ յարմար առիթը. եւ Անգղիոյ պատիւը պիտի ըլլայ մեր ալ փրկութիւնը, ինչպէս որ քանի մը Անգղիացի զինուորաց արիւնը փրկութիւն եղաւ Կրէտէի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հայկական շարժումի մէջ Անգղիոյ եւ ընդհանրապէս եւրոպիոյ խաղացած մեծ դերը, հոն կատարուած յիւանագիտական գործունէութիւնը, հասարակաց կարծիքի բուռն հոսանք մը ստեղծելու համար լրագրական եւ հրատարակչային մեծ ջանքերը, Հայկական դատին միայն մէկ կողմը կը ներկայացնեն. կտրուի լոկ մէկ անիւր. միւս կողմը, միւս անիւր «Հայ ժողովուրդ ինքն է», բնաշխարհին մեջ ապրող, տանջուող, նաեւ անոր հողէն ու ջուրէն, օդէն ու բոյսէն ազդուող եւ զայն վայելող Հայ յուրիւն, որ իբր պահպան հրեշտակ անքուն կը հսկէ այդ չքնաղ աշխարհին, Հայոց Աւետեաց երկրին ու Սիւնիի վրայ, կը պահպանէ հայու ոսկորներով պարարտացած ու արիւնով ոռոգուած այդ հողը, եւ ազգային շարունակութեան գրաւականը կը հանդիսանայ: Հայկական կտրուած մէկ անիւրով չի յալեր. պէտք է որ այս ազգային զանգուածն ալ շարժման մէջ դրուէր: Այդ պաշտօնը չէ կատարեց Հայ Ենդափոխական Շարժումը: Մեռած, անշարժ գանգուած մը, որչափ որ ալ ազգ եւ ժողովուրդ անունով մկրտես զայն, ազգային դատի մէջ մեծ ծառայութիւն չի կրնար մատուցանել ոչ ալ իրմէն սպասուած գործը տեսնել: Խորիմու պա-

տերազմէն ի վեր ազգային վերածնութեան գործը բնական, գանդաղ բայց վստահ քայլերով յառաջ կերթար կրթական ձեւի տակ. Դպրոցներ, ընկերութիւններ, լրագրիչներ Հայ ժողովուրդը յառաջ կը մղէին. ասոնք Յունաց «Հեթերոյալիս» պէս յեղափոխական նպատակ չունէին, լոկ ազգային վերածնութեան ոսկորի բաններն էին:

Պիտի գար սակայն ժամանակ մը որ տաքարիւն երիտասարդութիւնը, մանաւանդ եւրոպայի ազատութեան վարժուած մասը, այս շարժումը շատ դանդաղ գտնելով յեղափոխական աւելի արմատական եւ աւելի բուռն ու կտրուկ գործունէութեամբ ազգը շարժել եւ յուզել պիտի փորձէր եւ այսպէս ալ եղաւ:

Յեղափոխական շարժումը նախ «Հնչակեան» անունով ճանչուեցաւ Հայոց մէջ. կառավարութիւնը Հնչակ եւ յեղափոխութիւն համարել կը սկսէր. ժամանակ մը, մանաւանդ Փոքր Ասիոյ մէջ, Հնչակեանութիւնը մեծ գործունէութիւն ցոյց տուած է շարքերէն առաջ. բայց շարքերը, մանաւանդ իրենց ներքին կոնիւնքը երկպառակութիւնները, հինի եւ նորի, Սօցիալի եւ վերակազմալի բաժանումները դժբախտաբար շատ սկզբնական ցրտի գրեցին, ի միջի այլոց Փոքր Ասիոյ ցոյցերը. Պապը Աթիւնը Հնչակեան կուսակցութեան կը պարտինք: Ասոնք ժամանակ մըն ալ իրենց ուշադրութիւնը նուիրեցին յեղափոխական ուժերու եւ կուսակցութեաններու միացման գործին. ոչ միայն Հնչակի երկու պատակտեալ մասերը միացնել կը ջանային, այլ նաեւ Հնչակի եւ Դրօշակի միութեան կը ձգտէին. եւ սակայն թէ մին եւ թէ միւս վիժեցաւ եւ եղբայրսպան ծանօթ դժբաղդ պայքարով վերջացաւ:

Հնչակեան այս կոնիւնքներն ժամանակ «Դրօշակեանը» սկսան զօրանալ կարգ թը գործողութիւններով. Ասոնց կեդրոնը ազատ Զուլիցերիոյ ձիւնեա քաղաքն է, մեծ մասամբ Ռուսահայ գործիչներէ կը բաղկանայ Դէֆիս: Ուրեմն, տեղոյն լոյսով կարմրած երկրները վրանիս. ու արիւնով սասանող ու գոլորշիացած երկրները, ու խտենք հաւատարիմ ըլլալ իրարու»: Ապա, մինչ թիւթուէն ձայնը ախրութեամբ կը խեղդուէր, շարունակեց— «Այն տարօրինակ ազգնիսականութեամբ, որ մարդկային սրտերը յաւիտենապէս, խնդութեան ու տառապանքի համար իրար կը միացնէ, հազիւ թէ քեզ իմ ամբիւր վրայ դրած է ի այն անմոռանալի զիջելու, որ թէ եւ երէկ, այժմ անհունութեան ծոցին մէջ թաղուած կերեւի. —այդ բոպէին զգացի որ սիրեցի քեզ, թէ դուն իմ էութեանց մէկ մասնիկն է իր եւ թէ իմս պէտք էր ըլլայիր: Եւ դուն, Դէֆիս—չեմ սըխայիր, աշուշտ, այս սէրը փոխադարձ համարելով—թէ իմ անուշիկ գուսանուհին կը սիրէ իր Սիւլէյմանը»:

Վստահութիւն մը, բայց եւ այնպէս տարակուսանք մը կար իր հարցումին մէջ: Ակնապիչ պատասխանին կսպասէր: Աչքերս գետին յառնցիւ Լուս էի: «Կը սիրե՞ս զիս, Դէֆիս», Ո՞րքան ուրախութեամբ կուզէի յայտըսել եւ թողուլ որ զիս իր գրկին մէջ պարկապէս, սակայն խիղճս ահոնիլ

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՅԲ

41
Դ Է Ֆ Ի
Հայկական Ռոման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)
Գլ. Ե.

Ք Ա Ր Ա Յ Ր Ը

Ատեն մը երկուքս ալ լուռ էինք: Հօրը պատմած արհաւիրքի պատմութիւններուն վերջիլու մեծապէս ազդած էր իրեն եւ միմիայն ատեն ատեն ինձ կը նայէր հարցական եղանակով մը: Այդ հարցաքննութեան նըպատակը չէի հասկնար: Արդեօք ե՞ս ալ կսպասեցի ինչ ունէի այդ զարհուրանքներուն հետ: «Անկարելի է, խորհեցայ ինքնիրենս, այն ատեն ծնած չիք դեռ»: Բայց հետաքրքրութիւնս արթնցաւ. թէ եւ չը համարձակեցայ հարցնել:
Հետզհետէ Սիւլէյման երգը կրկին երգել սկսաւ. «Շատ գեղեցիկ է, Դէֆիս, ասիկա մեր հարսանեկան քայ-

Երգը պիտի ըլլայ:

— Շատ հաւանական է մեր թաղման մահերգը, պատասխանեցի անփոյթ կերպով:
Սիւլէյմանի դէմքը գունատուեցաւ: «Դէֆի, գուցէ, ինչե՞ն թէ գուշակութիւնդ չիբականանայ, սիրելիս... սիրելիս...»
Մեր աչքերը իրարու հանդիպեցան: Երկուքը մը կար այդ փոխադարձ նայուածքներուն մէջ:

Գլ. Զ.

Ս Մ Է Լ Ա Մ Ո Ւ Ր

Ինչպէս որ ամառնային կայոյտ երկրները երբեմն ամպով մը յանկարծակի կը խաւարի եւ նոյնքան արագութեամբ ալ կը պայծառանայ նոյնպէս եւ զազարի նախազգացումը, որ մեր մտողչ հոգիները վրդոված ու զանոնք սարսեցուցած էր միմիայն զազուշանքներով, շուտով անյայտացաւ: Սիրոյ ջերմ մթնոլորտին մէջ կը հանգչէինք. Սիրոյ ուկիանին մէջ կը տատանէինք. մեր վրան, շուրջը, ներքեւը Սէր էր. մեր սրտերուն մէջ Սէրէն զատ ուրիշ բանի ապաստան չկար...
Ուրեմն մենք—երկրի թիթեռնիկներս—ճարտիչք իր ճառագայթներուն մէջ քանի որ կրնանք, գիշերը շուտով կուգայ...
Սիւլէյմանի դէմքին վրայ տեսած արտայայտութիւնս այնքան բոպէական եղաւ, որ միմիայն իր անմիջապէս ըրած նկատողութեան առթիւ կրցայ յիշել զայն: «Անեղիւրդ մարդը իր ճակատագրին կը զիմադրաւէ, Դէֆիս, Երկչոտը միայն կը վախայ անկէ: Գիտես թէ Մահմետականները ֆատալիստներ են (բաղդակրօն):
— Այո, բայց դուն Մահմետական չե՞ս: Ինչո՞ւ զողջաջերի հարցումը ուղղած պահուս: Ինչո՞ւ համար ակնկառոյց իր շրթունքներէն պատասխանի մը կսպասէի: Ո՞չ, շատ նշանակութիւն ունէր այդ ինձ համար... Հաւանականաբար հոգւոյս տագնապը երեսիս վրայ ալ արտայայտուեցաւ. որովհետեւ, Սիւլէյման, փոխանակ պատասխանելու, ապանքով ինձ նայեցաւ:
Ապա խոհուն շեշտով մը ըսաւ. — Դէֆիս, ի՞նչպէս կենթադրես թէ այն անձը որ կը սիրես...» Տեսնուածն անհամբեր շարժում մը ըրի. — «Ո՛չ, ո՛չ, սիրելիս, ես այդպէս պիտի ըսեմ: Հիմա շողքորթութեան ատեն չէ:

Եւ գործունէութեան ասպարէզն է կողմաս եւ կողմասի մօտ Արեւելեան մասը Հայաստանի Հայաստանի ընդհարումները . Օսմ. Պանքայի ցոյցը եւ 1904 Սասունի գործողութիւնները ինչպէս նաեւ կողմասի հայոց այժմու շարժումներն ալ ասոնց կը պարտինք (Շարունակելի)

ՌՈՒՍ—ՃԱԲՈՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Պատմութիւն մըն է այլեւս Ռուս-Ճաբոնական պատերազմը:

Օգոստոս 29-ին, Սմերիկայի աստիճանաւ նախագահը նստած է իր Օյսթըր-Պէյի գրասենեակին մէջ, ու կ'անդրադառնայ իրենու խաղաղութեան միտքնած հորիզոններուն: Հետախօսը կը հնչէ յանկարծ. Պր. Լօօպ, նախագահին քարտուղարը կը պատասխանէ կոչին:

— Ի՞նչ!... — կը հարցնէ Պր. Լօօպ. Սաղաղութեան աւետուքը կը կրկնուի հետախօսին: Ի՞նչ քարտուղարը տակաւին չի կրնար պտտահիլ մեքենային ու իր ականջներուն:

Նախագահը անոր շուարուովը նշմարելով

— Ի՞նչ է, ի՞նչ կայ, կը հարցնէ:

— Փորձումով է լուր մը կը յայտարարէ թէ լիազօրները համաձայնած են ըտր կէտերուն վրայ, և թէ շուտով խաղաղութեան դաշնագրութիւնը պիտի կատարուի:

— Պատուական, — սքանչելի, կը րացագանչէ միջնորդ-նախագահը, բայց — տարակուսանքը իր միտքն ալ կը վրդովէ — կը կարծէ՞ք թէ վստահելի է լուրը:

— Ինչո՞րովն վստահելի:

— Աղէ՛կ, աղէ՛կ, կը կրկնէ գոհունակութեան ժպիտը կրտսին նախագահ Ռուզվելթը, օրուան ամենէն երջանիկ մարդը, իր ճիգերուն փառաւոր յաղթանակէն արբելու:

Երկբորական հոսանքի մը պէս՝ խաղաղութեան այս լուրը կը հասնի,

կը հաղորդուի արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ, ու չորս կողմէն հեռագիրներու հեղեղատ մը կը հոսի նախագահին դիտուն, Ինթերպուր. կէն, Թօքիօն, Լոնտօնէն, Բարիզէն, Պերիլնէն, Վենսպետներէն, Նախագահներէն, Նախարարներէն, միլիտանտներէն, համայնքներէ, անհամար անհաշիւ հեռագիրներ՝ շնորհաւորելով ու շնորհակալելով զինքը իր մե՛ծ, մե՛ծ յաջողութեան և անգնահատելի ծառայութեան համար:

Մինչեւ Օգոստոս 16 խաղաղութեան բանակցութիւնները յաւազրիչ եղանակով մը յառաջացած էին: Օգոստոս 18 ին սակայն խաղաղութեան զիր զէմքերը խոտոտեցան յանկարծ, յոյսնրը ցնդեցան, ու արիւնի կարմիր ամպեր իջան, ծանրացան հեռաւոր Մանչուրիայի հորիզոններուն վրայ: Անօթի կատաղութիւնը կը մոնչէր:

— Ո՞ր և է ձեւի սակ կողմէ կը իսկ պատերազմական տուգանք շնք կըրնար տալ, և ոչ ալ Սախալին կղզիէն կրնանք հրատարիլ:

Ա՛յ էր ուս լիազօր Վիթէի լաւ կոնական պատասխանը յաղթող ճարտի լիազօրներուն կրեսն իվեր նետուած:

Դժուրան, հակառակորդ լիազօրը, անդառնալիքէն կը պիտէր իր պահանջներուն վրայ:

Ռուս լիազօրները ձեռնուռնայն իրենց հայրենիքը դառնալու ճամբորդութեան ժողովուրդներն մէջն են:

Յոռետեսութեան շուռն մը կը ծանրացնէ միջնորդը:

Հոս ծայր կ'առնէ Միացեալ Նահանգներու Պր. Լուրնոս նախագահին կրկար, հասարակ ու քրտնաշատօնէն ետանդուն ճիգը՝ իրարու երես դարձնող այս հակառակորդ լիազօրները համբարշտելու և իր կողմէ ձեռնարկուած խաղաղութեան բանակցութիւնները՝ փոխադարձ զիջումներով յաջողութեան ճամբուն մէջ զննելու: Ս. Ինթերպուր. կի Ամերիկեան դեսպանի միջոցաւ ծարրն կը զիմէ. հոս պատճառն Իտալիայի վրայ հարձակուելու կը հրաւիրէ. մասնաւոր կերպով կը սե-

սակցի ձարոնցի պատուիրակներուն հետ. կը թելադրէ, կը համոզէ, կը իւրացնէ երկու կողմն ալ չի վիճեցնել այս մեծ ձեռնարկը ի սէր իրենց հայրենիքին և մարդկային խաղաղութեան:

Ճարտնցիները կը զիջանին մասամբ. պատերազմական տուգանքի պահանջը ետ կ'առնեն Սախալին կղզին սակայն իրենց կը պահեն պայմանաւ որ՝ եթէ Ռուսիա փախքի՝ անոր հիւսիսային մասը իրեն տան զրամական հատուցումի մը փոխարէն:

Վիթէ կը պնդէ թէ կողմէ կը իսկ չեն կրնար տալ ո՛ր և է անուրի տակ և թէ Սախալին կղզիին հիւսիսային մասը գոնէ պէտք է իրենցն ըլլայ առանց վճարումի. Ու կը յայտարարէ նոյն ատեն ալ թէ ասիկա իր վերջնագիրն ըլլալով կէտադրութեան մը իսկ շնչելու պիտի չը զիջանի ինք, և թէ ժամավաճառ ըլլալու ալ տրամադիր չըլլալով՝ կողմէ մէկ երկու օրէն մեկնիլ իր երկիրը:

Ռուս լիազօրին այս խորխոր ու ինքնավստահ կեցուածքը անբացատրելի էր. արգարէ:

Պատճառն Գոմուրա սակայն նոյնքան կը յամայնէր ու կը պնդէր թէ ասկէ աւելի զիջում մը չէր կրնար ընել ձարոն, որ յաղթող մը կը ներկայանար վերջապէս:

Կացութիւնը խիստ ծանր է.

Նախագահ Ռուզվելթը, թէև ինքզինքն անզօր կղզայայլեւս, վերջին փորձ մըն ալ կընէ սակայն իր բովանդակ ազդեցութիւնն ու կարողութիւնը գործածելով՝ երկու կողմերը փոխադարձ զիջումներու բերելու:

Ճարտնական լիազօրը նիստերու յետաձգութիւն մը կը խնդրէ՝ որպէսզի ռուս վերջնագիրը իր վեհապետին հաղորդելու և անկէ հրահանգներ ստանալու ժամանակ ունենանայ:

Ասիկա կը տեսէ մինչեւ օգոստոս 29. Պատճառն Գոմուրա ոչ պատասխան կատարայ և ոչ ալ հրահանգ. Ռուս լիազօրները կ'անհամբերեն. Գիշ մը աւելի յոռետես մտքեր ճարոնի վերջնական պատասխանը Մանչուրիոյ մարդազաշտերուն վրայ անոր թըն-

դանօթներուն բերնէն լսել կ'ակնկալէին:

Սաղաղութեան ամենէ աւելի վերտանգուած ու գրեթէ անհնարին այդ վիճակին մէջ էր որ Միքստօն, իր երիցագոյն զիւանազէտներով՝ որոնց պարագլուխն է Մարքիզ Իթօ տեղի կուտայ յանկարծ Ռուսիոյ վերջնագրին, անակնկալներու անակնկալին բերելով ամբողջ աշխարհքն ու զիւանազիտութիւնը:

Իրենց վեհապետէն ստացուած ազատութեան այս հրամանը անհուն արուածութեամբ ու կսկիծով մը կը լեցնէ հոստեղի հպարտ լիազօրները, ինչպէս նաև բոլոր ճարտնցիները, որոնք իրենց այդ յուսախաբութիւնը չեն կրնար ու է կերպով բացատրել: Կըսուի թէ պատճառն Գոմուրայի աչքերը արցունքոտած են երբ հաւանութեան գիրը մատուցած է Վիթէի. որ քիչ վերջ պիտի պոռոտախօսէ ամերիկեան մամուլին միջոցաւ թէ «եթէ մենք մեր Նալուներն ու Մուքտէնները ունեցանք, ճարտնցիներն ալ իրենց Բորթսմուլթը ունեցան»...

Ո՞վ միտիլարութիւն...

Ընորին Վեհապետութիւն ճարոնի կայսրը, կը յայտարարէ ճարտնցի լիազօրներու տեղեկագիրը, պատասխանելով մարդկութեան և քաղաքակրթութեան պահանջներուն, համբարշտութեան կատարեալ ոգիով մը և խաղաղութեան սիրոյն համար. կարասուն է իր լիազօրները վերցնել պատերազմական տուգանքի պահանջը, ու կը հաւանի Սախալին կղզիին բաժանմանը...

Վիթէ և իր ընկերները, ճարտնական այս նախախնամակնօրէն անակնկալ զիջումէն խանդավառուած ու ինքնիրմէ ելած, կըսեն ամերիկեան թղթակիցներ. տղաքներու պէս կը խնդան ու կը թոյլին եղեր իրենց սենեակներուն մէջ առանձնացած:

Ըստ չեմ կարծեր, ըսած էր Վիթէ, թէ ուրիշ ու է մէկը իմ տեղս պիտի կրնար խաղաղութեան կարելիութեան մը հաւատալ, ա՛յն ներկայ արդիւնքով. Ռուսիա կողմէ մը իսկ չի վճարելով հանդերձ, այսօր Սախա-

պաղար մը կը մղէր ու թոթովեցի— «Չեմ... կրնար... մահմետական... մը... սիրելի... Հաւատքս չեմ կրնար ուրանալ»:

Սիւլէյման յուզուած երեւցաւ Դէֆիս կը սխալի Ես մահմետական մը չեմ: Էն կը կարծէ՞ թէ՛ այն անձը՝ որ կը սիրէ զինքը, կրնայ խարդաւանքի կամ սառնաստանի մը հաւատալ Ո՞չ, սիրելիս, Սիւլէյմանը միւսնոյն տիրոջ կերկրպագէ՛ ինչ որ զուէն: Ան քրիստոնեայ մէ՛:

— Գրիտոնեայ մը, գոչեցի, ո՛հ, ի՛նչ ուրախութիւն... ի՛նչ երջանկութիւն...:

Այլեւս սէրս պարտկելու ճիգեր չըրի ինքզինքիս վրայ զայրացած էի: Ի՛նչպէս կրնայի տարակուսիլ մէկուն, որ ինքզինքը նուիրած էր Հայաստանի փրկութեան օգնելու: Ոտքը ինկայ ներողութիւն խնդրելու. բայց, անշուշտ այս լոկ պատրուակ մը ըրաւ զիս սրտին սեղմելու:

— Ո՞չ, Դէֆիս, ներողութիւն մի՛ խնդրեր ինձսէ: Ես քուկը խնդրելու եմ, քեզ նախապէս ըսելու էի թէ շատ տարիներ առաջ թողած եմ սուտ Մարգարէին դաւանանքը: Ընձարիտ հաւատքը ընդգրկելէս վերջն էր որ

սովբեցայ Ազատութիւնը սիրել: Բանասեղծը շատ ուղիղ ըսած է թէ՛ «ան է ազատ մարդը, որուն ճշմարտութիւնը ողբատ կընէ»: Միւս բոլորը յիրաւի ստորակներ են:

— Այո, ըսի, շատ ճշմարիտ է: Կը սիրեմ այդ գաղափարը. կորեքնիկոսն է այդ:

Սիւլէյման ապեցաւ.— Դէֆիս ուսած է՞:

Քանի մը զրքեր, ըսի համեստութեամբ. Արիւնս երեսս բարձրացաւ: Կամչնայի որ այդքան քիչ գիտէի:

— Մասնաւորապէս ժան տ'Արքի պատմութիւնը, ժպտեցաւ ան:

— Օ՛, այո՛, և Վիլհելմ Դէյի, Ուոլկսի, Բրուսի, Յոյն զիւցազներուն և շատերուն պատմութիւնը— որոնց համար Միքէն կըսէ թէ «աշխարհը արժանի չէր անոնց»: Ու միշտ կը բաղձայի որ, յարեցի պարզութեամբ, եթէ երբէ՛ք սիրահար մը ունենայի. Դէյ մը, կամ Ուոլկս մը և կամ...:

Սիւլէյման ընդմիջեց համարյոքով մը— «Դէֆիս, գոհար մըն ես զուէն, Շատ դիւրին է տեսնել թէ՛ ուր ես հրահրած հայրենասիրութեանդ հուրը Ո՞վ սովբեցուց քեզ:

— Ո՞չ օք, Միքէն կարգալ սովբեցուց ինձ ու հայրս, ինձ հետ մտեր-

մանալէն իվեր՝ պատմեց զանոնք:

— Ու հարթ չէր ուզեր իր Դէֆիին վրայ նայիլ... Ի՛նչպէս... ինչո՞ւ համար:

Դիւլստ ժածեցի Մանկութեանս այս դէպքը յիշած պահուս միշտ տրտութիւն մը կղզայի. «Չեմ գիտեր. Միքէն կըսէ թէ որովհետեւ չեմ յիշողութեան մէջ զարհուրելի դէպք մը կարծեցնէի:

— Ինչո՞ւ Դէֆիս: Եւ զուէն կը սիրեմ Սիւլէյմանը, թէև ան Դէյ մը չէ:

Շեշտակի իրեն նայեցայ.— «Եկուր» ըսի, թեւէն բռնելով, ու տարի զայն ուր որ Միքէն մեր պտուղներէ, բլիթներէ, յեղրախորիսիսէ բաղկացած ճաշն ու իր հրաշալի սուրճը կը պատրաստէր: Ձգեց գործը ու ժպտերես մեզի դարձաւ:

— Միքէս, ըսի, ասի իմ տէրս է:

— Ո՞չ, ո՛չ, ըսաւ Սիւլէյման, այս իմ թագուհին է... ու ծիծաղելի լըրջութեամբ մը ձեռքս համբուրեց:

— Գիտէի արդէն... գիտէի... գոչեց Միքէն հոգեգմայլ. թո՛ղ մեր հայրերուն Աստուածը երկուքդ ալ օրհնէ— և, ծածկելու համար արցունքի երկու խոշոր շիթերը, որոնք ակամայօրէն այտերէն վար սահած էին, աճա-

պարանօք կրկին սուրճին դարձաւ:

Երկուստեք տիրող ծանր տագնապը փարատելու համար Սիւլէյման ըսաւ.


— Ուրախ եմ որ սուրճը պատրաստ է: Վստահ եմ թէ Դէֆիս ալ պիտի խմէ քիչ մը:

— Եւ զո՞ւն, տէր իմ, ըսաւ Միքէ, Ինթրովազ կըսէ թէ երկար ատենէ իվեր բան մը կերաս չես:

— Օ՛, Միքէ, քեզ հարկ չկայ ըսելու թէ մարդ միայն հացով չպարիր, ըսաւ Սիւլէյման, ու ինձ նայեցաւ ժպտազին:

— Գրիտեմ, գրիտեմ, պատասխանեց խելացի Միքէս, շուտով անոր նայուածքին ու ժպտին մեկնութիւնը հասկնալով— «տիրոջը սիրտը ուրախութեամբ լեցուած է»:

(Շարունակելի)



լին կղզիին կիսուն տէրն է. Այս առ-
տու ես ներկայացուցի իմ գրաւոր
պայմանս, որ ուսու վերջնագիրն ալ
էր. Ընդունուեցաւ ճարտնի կողմէ. Ես
ապշեցայ. Վեհաժողովի սենեակը մտ-
նելէս առաջ ես ինչ տեղի ունենա-
լիքը չի խորհեցայ. Ասանկ մեծ ու
երջանկարար ելք ճը չէի կրնար
գուշակել. Որոշած էի զիր մը իսկ չի
ջնջել վերջնագրէն (ո՛հ, ո՛րչափ հա-
ւատալի). Ատիկա իմ մասին ալ վեր-
ջացած էր, թէն չէի կրնար ըսել թէ
ինչպէս պիտի գործէր ան ճարտա-
կան մտքերու վրայ. կատարեալ յաղ-
թութիւն մը եղաւ այս մեզի համար».

Ասաղաղութեան դաշնագրութիւնը
իր վերջնական ձեւին մէջ զնեւու-
գործը յանձնուեցաւ ուսու եւ ճարտն
միջնագրային օրէնագէտներ բրօֆ. տը
Մարթէնի եւ պր. Տէնիսընի, որոնք
անմիջապէս գործի ձեռնարկելով
պատրաստեցին ֆրանսերէն եւ անգ-
լիերէն օրինակները Ռուս-ճարտնա-
կան խաղաղութեան դաշնագրին.
Անպտեմբեր 5-ի կէսօրին արդէն
պատրաստ ըլլալով ստորագրութեան
արարողութիւնը կատարուեցաւ. նախ
ճարտնական գլխաւոր լիազօր պատօն
Քոմուրան ստորագրեց ֆրանսերէն օ-
րինակը Ռուսիոյ համար, եւ ապա
ուսու գլխաւոր լիազօր Վիթէ ստո-
րագրեց անգլիերէն օրինակը ճարտնի
համար, յետոյ ստորագրեցին իրենց
երկրորդները՝ պատօն Ռօզէն եւ պա-
տօն Ռաքաիւրա. Ժամը 3.50 ին ա-
ւարտեցաւ ստորագրելու գործողու-
թիւնը. Այս արարողութեան միջոցին
ո եւ է խօսակցութիւն տեղի չունե-
ցաւ երկու հակառակորդ լիազօրներու
միջեւ. Թուղթերու երկու կողմէ ստո-
րագրուելէ վերջ սակայն Վիթը պա-
տօն Քոմուրայի մօտենալով ձեռքը
անոր երկնցուց, Քոմուրան զայն ջեր-
մօրէն սեղմեց.

Բօրթմուծի նաւահանգիստէն
թնդանօթները որոտացին, հորիզոն-
ներուն աւետելով քսաններորդ դա-
րու ամենէ արիւնտ ամենէ կատարի
եւ սակայն ամենէ նախախնամական
պատերազմին վերջը.

(Շարունակելի)

Պօթօն

ՊԱՔՈՒԻ ՈՃՐԱԿՈՐԾՈՒԹԻՒՆԻՆԸ

(Լը Քուրիէ էօրօպէէն)

(Շար. նախ. քիւիկ)

Ռուսիոյ վերջին քայլը իմաս-
տուն միջոց մըն էր որ հայ աշ-
խարհը ի նկատի առաւ իր իրա-
կան արժէքով, վայելուչ, խաղաղ
և խորին ուրախութեամբ, ուր իր
քաջ գիմադրութեան յաջող պը-
սակութիւն գոհացման հետ աւելի
մեծ գոհացումով կը տեսնէր որ
Ռուսիա վերսկսած է ըմբռնել իր
իրական շահերը. Բայց այս մի-
այն դժնդակ խաղ մըն էր, որ
ցարիզմը կը խաղար հայերու
գլխուն. Կը վերագրածնէին հայ
եկեղեցուն հարստութիւնները և
միւս օրը թաթարներուն կը թոյ-
լատէին կործանել ամբողջ հայ
ընկալութիւնը, խորտակելով
հարստութեանց աղբիւրները ո-
րոնք իր երջանկութեան հիմը
կը կազմեն. Կը բանային գպրոց-
ները, սակայն գիտկներով լեց-

ներու պայմանով.

Այս ոճի իր մէջ կը կրկնուի
երէկուան սխալը, աւելի ծանր և
անասնական ձեւով մը. ու այս
սխալը կրնայ աւելի վտանգաւոր
և ստորացուցիչ հետեւանքներ
ուեննալ Ռուսիոյ համար քան
ուսու ճարտնական պատերազմը
եթէ ցարիզմը յամառի այս կոր-
ծանարար ընթացքին մէջ.

Բոլորովին պարզ է թէ Կով-
կասի թաթարները Սուլթան Հա-
միտէն ներշնչուած են.

Քանի տարիներէ իվեր Եըլ-
տըղին վամբրը բազմաթիւ
պատուիրակներ կը զրկէ Կովկա-
սի մուսուլմաններուն քով զանոնք
հայերու գէմ գրգռելու. և Ռու-
սիոյ գէմ ապստամբութեան մղե-
լու համար Ան Կովկասի վերա-
տիրումը կը կազմակերպէ.

Այն օրը, ուսական պարտու-
թիւններու պատճառով, երբ թա-
թարները կարծեցին թէ Ռուսիան
անբուժելիօրէն թուլցած է, սկսան
Համիտին ծրագրերը իրագործել.
ասոնք, վեց ամէ իվեր նետուե-
ցան հայերուն վրայ կատարի
կռիւներ տեղի ունեցուն, հարիւ-
րաւոր մարտիկ ինկան երկու
կողմերէն, սա Ապտուլ Համիտին
ծրագրին առաջին կէտն էր— ո-
չնչացնել հայ տարրը որ կրնան
Կովկասի վերատիրութիւն խոչնդոտ
հանդիսանալ. Ռուս իշխանու-
թիւնները, նահանգապետ նահա-
շիտզէ գլուխուն ունենալով, յի-
մարար կը քաջալերէին մու-
սուլմանները իրենց անասնական
գործին մէջ նոյն իսկ բացարձա-
կօրէն անոնց օգնելով. Իշխանու-
թիւնները նոյն իսկ զինաթափ
կընէին հայերը, ինքզինքնին
պաշտպանելու անկարող վիճակի
մէջ զնեւու համար.

Ասոնք, առաջին սարսափը անց-
նելէն յետոյ, ինքզինքնին շատ
լաւ պաշտպանել սկսան, և վեր-
ջապէս թաթարները ստիպեցին
ակնածել իրենցմէ.

Մտածելով որ մահմետական-
ներու այս յարձակումը ուսու իշ-
խանութեանց կողմէն կազմա-
կերպուած է, ու թաթարները
միայն կոյր և անբան գործիքներ
են նշած. հայերը ուղեցին, շատ
իմաստաբար, ամեն ինչ ընել եր-
կու ժողովուրդներուն մէջ լուրջ
խաղաղութիւն կայացնել յիմար
և հրէշային սարսափներուն կրկ-
նումի առջեւ առնելու համար.

Անոնք կազմակերպեցին փա-
ռաւոր ժողովներ ուր հայ և մու-
սուլման նշանաւոր մարտիկ ի-
րենց ցաւը յայտնեցին անցածի
մասին և խոստացան իրենց ամ-
բողջ ազգեցութիւնը ի գործ զնեւ
թշնամութիւնը խնդրել իր սաղ-
մին մէջ.

Հայ կրօնաւորները գացին
մուսուլմաններու մղկիթները և

մօլլաները հայոց եկեղեցիները
երկու ժողովուրդները մղկու-
ղէպի նախկին բարեկամական
յարաբերութիւնները. Այս բոլոր
ազնիւ ճիգերը, որուն նախա-
ձեռնարկը հայերը եղան, յա-
գեցան վայրկենական զինադուլի
մը.

Հայերը անկեղծ իրենց հաշ-
տութեան մէջ ուրկէ վերջ բան
մը չըրին այս մերձեցումը խոր-
տակելու համար. այսօր կը հաս-
տատուի որ մուսուլմաններ ոչ
շատ անկեղծ այս զինադուլը ըն-
դունած են միայն նոր յարձա-
կումի մը պատրաստութիւնը
տեսնալու տիրումով և հիմակ կը
գործադրեն աւելի մեծ շափով
այս անգամ վճռած ըլլալով ոչ
միայն շնջել հայերը կոտորածով
այլ և անոնց նիւթական կարողու-
թիւնը ոչնչացնելով, Կովկասի
մէջ մուսուլմաններու գերիշխա-
նութիւնը տարածելու համար.

(Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսուքի երկրագործական
պանքայէ 150000 լէվ գողցեր են
ցորեկը պաշտօնեաներու ձաշի
գացած առնելը քասսան բանալով.
Ձերբակալուած են քանի մը
պաշտօնեաներ, բայց իրական
գողը դեռ մէջտեղ չէ ելած.
Խուզարկութիւններ կատար-
ուած են ու կը կատարուին բայց
դեռ ոչ մէկ արգիւնք ստացուած
է.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Հակառակ միջազգային սովո-
րութեանց Անգլիոյ միջերկրա-
կան նաւատորմիդին, որին մէկ
մասը Ձմիւռնիա պիտի գայ, ա-
միրալը Սուլթանին չի պիտի այ-
ցելէ. Այս ձեւով Անգլիա պիտի
ցոյց տայ իր տհաճութիւնը թուր-
քիոյ Մակեդոնիոյ հանդէպ բռնած
գիրքին համար.

Սեպտեմբեր 11-ին «Վեչերնա
Բօշթայ»-ին Պօլսոյ թղթակի-
ցը կը հեռագրէ թէ Հայաստա-
նի մէջ գտնուող հիւպատոսները
երկրին կացութիւնը շատ ծանր
կը տեղեկագրեն. նոր կոտորած.
ներ կը պատահին, Տէրսիմի քուր-
տերը արգէն խժգոնութիւններ
սկսած են, ինչպէս և Էրզրում,
ուր հայերը ինքնապաշտպանու-
թեան պատնէշներ շինած են
կոտորածէ վախճալով.

Հայոց Պատրիարքը երեկ գը-
նաց պալատ Սուլթանի ուշադ-
րութիւնը հրաւիրելու կացու-
թեան վրայ և Սուլթանի պաշտ-
պանութիւնը խնդրելու.
—Նոյն թուականին Պ. հեռ.

գործակալութիւնը կը հաղորդէ.
—Կը հաղորդեն որ Տէրսիմի
քիւրտերը մեծ ջարդ տուեր են
Էրզրումի հայերուն և թալաներ
են.

—Եւրոպական թերթերը կը
հաղորդեն որ Իլմիրի Մանիսա
արուարձանին մէջ հայու մը տու-
նէն ումբներ գտած են. կոտո-
րածի վախ կայ. շատ մը հայեր
ձերբակալուած են. բոլոր դրոս-
ցի անգործ հայերը իրենց հայ-
րենիքը վտարուած են.

Սուրբաւ և յիպոլիտակսեները

Սուլթան պատրիարքին և ի-
րեն գիմուլ եպիսկոպոսներուն
յայտարարած է որ թող գիմեն
Կաթուղիկոսին որ ան յեղափո-
խական կոմիտէներէն պահանջէ
զագրին գործել և ինք այնժա-
մանակ հայերը կը պաշտպանէ.

—Եւրոպի քննիչ յանձնա-
խումբը համոզուած է որ Պոլսոյ
յեղափոխական շարժման Պարագ-
լուիսը Լեւոն Չէրչեանն է, «Իւ-
զանդիոն»-ի խմբագրիներէն մին.
Իմացած են որ մեծ քանակու-
թեամբ ուժանակ Պօլիս բերուած
են գինիի շիշերով.

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Փոխարքան Պագու եկեր է ան.
ձամբ խժգոնութեանց պատճառ-
ները քննելու թուրքերը մէկ
կայարան առաջ գացեր են և
մեղքը հայերուն վրայ ձգեր են.
հայերը Պաքուի կայարանը գա-
ցեր են տաշնորդին հետ մէկ-
տեղ. Փոխարքան պաղ ընդունե-
լութիւն ըրեր է և չոր պատաս-
խան տուեր է հայ պատգամաւո-
րութեան.

— Փոխարքայի միջամտու-
թեամբ հաշտութիւն կայացեր է
հայերու և թուրքերու միջեւ.
Երկու ժողովուրդներու ներկա-
յացուցիչներէն յանձնախումբ մը
կազմուեր է իրաւարար տեսանի
պաշտօնով. Այդ յանձնախումբին
ամեն մէկ անդամը գրամական
երաշխատութիւն տուեր է, ո-
րոնցմով պիտի հոգացուի տեղի
ուսնալիք փրասները եթէ կրկին
խժգոնութիւններ տեղի ունենան.

Ճ Ա Բ Ո Ն Ի Ա

Շատ մը թերթերու հրատա-
րակութիւնը արգիւրուած է ժողո-
վուրդը գրգռող յօդուածներ
հրատարակելուն համար.

Ժողովուրդը միթիւնկներ կընէ
թօքիոյի մէջ պատերազմական
դրութիւնը վերցնելու համար.
—Մ ի ք ա զ ա հրդեհուած
զրահաւորին քարթիւնը անձ-
նասպան եղած է.

—Ռուսական Ռէթիլիզան
զրահաւորը որ Բօրթ Արթուրի
քով ընկղմեցաւ, յաջողութեամբ
ժողէն հանուած է.